

# Բ Ի Ի Ր Ա Կ Ն

## Ղ Ր Ա Գ Ի Ր

Ազգագրական, Բանասիրական, Լեզուաբանական եւ Գրական

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԵՐԵՎԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրատունք ու Պայի Յարկան 50 Դրուշ

վեցամսեայ 30

Օտար Երկիրներ [6 Բուպիլ 15 Ֆրանկ

Հ Ա Ս Յ Է

در سعادتده بجهت قوسنده قاضعسكر خاندنه

« Եւրացն » غزته سی اداره سنه

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ԲԻԻՐԱԿՆԻ

Դազաակեր Խոան, Պահկէ գարու, Ե. Պայիս

### ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ

Կ Ե Դ Ր Ո Ն Ն Է

Ո Ւ Ր Պ Է Տ Բ Դ Ի Մ Ե Լ

Դպրոցի տնօրէն, ուսուցիչ, դաստիարակ, ուսուցչուհի, օգնական դասատու եւ այլն փնտոող Թաղ. Խորհուրդներն ու զպրօցական Վարչութիւնները:

Բազմաւեայ Փորձաւորքիւն

Արագ գործուեկուրքիւն եւ նշուրքիւն

Կ Ա Ր Գ Ա Յ Է Բ

ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՅԱՅՑԱԳԻՐ — ԳՐԱՅՈՒԹԱԿԸ

որ կը պարունակէ Գործակալութեան այլ եւ այլ ձեւերուն վրայ շահեկան տեղեկութիւններ եւ պայմաններ:

ԳՆՆ 3 ԴԱՆԿԱՆ

ԿԱՆԵՆԻԿԻ ՊԱՅՄԱՆԸ

Մեծ. Գործակալներէն ու րաժանորդներէն կը խնդրենք որ « Բիրակն » ի տարեկան կանխիկ փճարեղով պայմանիւն հասկնալեղով փոյր արեւմտեան:

### Հ Ա Ս Կ Ա Ք Ա Ղ

« Զեյոյզ ի Խոյց » զեղեցիկ ու նուիրական խօսքին՝ զոր մեր կղերական հայրերը կ'ուսուցանեն մեզի Պատարագի ատեն՝ իրենք չեն ուզեր կարծես հասկընալ իմաստը՝ որքան խորախորհուրդ այնքան ալ լայն ու բարեբար: Ժողովուրդին նպատակ ու նուիրատութեամբ է որ չեն ու կանգուն կը մնան մեր կրօնական, բարեգործական, կրթական եւ այլ հաստատութիւնները եւ ատենք ալ փոխադարձ պարտականութիւններ ունին՝ հոգւոր ու երբեմն ալ նիւթական սատար ըլլալու ժողովուրդին:

Կը յիշուի թէ Պատրիարքարան եւ Նպատից Յանձնաժողով հազիւ մէկ անտան համեմատութեամբ կրնան գոհացում տալ պաւտական կարօտութեանց եւ խնդրանքներուն, որոնք մէկէ աւելի ձեւով կը ներկայանան. զբամական նպատէն զատ, Յանձնաժողովը միշտ իր գրասեղանին վրայ ունի նամակներու զէզ մը ուր կարօտ զպրօցներու համար դասադիրք, եկեղեցիներու հա-

մար կրօնական մատեաններ եւ այլն կը ինդրուի, և Յանձնաժողովը ստիպուած է, իր արգէն անձուկ միջոցներէն մաս մ'ալ այս պէտքերուն յատկացընել եւ դասադրքի եւլն հայթայթման համար գրավաճառներուն ու հեղինակներուն զիմում ընելով՝ անոնց վրայ ալ ծանրանալ՝ իրբեւ զոճողութիւն, զեղչուած գներով գիրք գնելու համար: Բայց անդին, վանքերու մէջ ազգը ունի ըստուարակոյտ միջերք մը ամէն տեսակ գրքերու, զորոնք լոյս բերած է նպաստով հայ ժողովուրդին եւ յօգուտ ճշխարի մանկանց եկեղեցւոյ՝ ինչպէս կ'ըսեն աւանդական բանաձեւով: Արդ, ո՞ր օրուան և որո՞ւ համար կը պահեն այդ գրքերը. ո՞ր են էջմիածին, Երուսաղէմ, Վենետիկ, Վիէննա: Արդեօք «պատշաճից օրէնքի» համար, կ'ուզեն որ խնդրանք ու աղաչա՞նք մատուցուի՝ պաշտօնական զիմում ըլլայ իրենց: Զեւակերպութիւնները այս տեսակ պարագաներու մէջ զանց կրնան առնուիլ և ինքնարբերաբար եղած նուիրատուութիւն մը աւելի հաճոյ է թէ՛ Աստուծոյ և թէ՛ մարդոց առջև: Ժողովուրդն է որ իր լայն օրերուն միջոց տուած է մեր վանքերուն՝ սպարան հաստատել, գիրք հրատարակել եւլն, ժողովուրդէն առածնին ինչո՞ւ հիմա անոր չդարձընել: Վենետիկ ու Վիէննա՝ նախնեաց մատենագրութենէն, դասական հին ու նոր երկերէն, պիտական պիտանի գրքերէն, էջմիածին ու Երուսաղէմ ալ կրօնական եւ ուրիշ նպատակայարմար դասագրքերէն պէտք է որ բաւականաչափ դնեն Պատրիարքարանի տրամադրութեան տակ դաւառական լուսակարօտ անկիւնները զրկելու համար:

Կրնա՞նք յուսալ թէ այս սողերը աննկատ չայլտի մնան:

Հայրապետական ճեօրիմութիւն. — Գեղեցիկ զուգարկութեամբ մը «Բիւրակն»ի 9 թիւով յայտնուած բաղձանքը որ հանրութեան ալ ցանկութիւնն է, Մայր Աթոռի կողմէ իրագործուելու յոյս կայ, ինչպէս կ'իմանանք Տպարանի

Տեսուչ Աշոտ վարդապետի գրութենէն: Աստուածաշունչը պիտի տպուի Ս. էջմիածնի տպարանէն՝ աժանագին, մաքուր, պատկերաղարդ. այս է Ամենայն Հայոց Ս. Հայրապետի որոշումը: Բայց ճշդիւ ժողովրդին հասկցած աշխարհաբարով Աստուածաշունչ մը աւելի օգտակար չպիտի ըլլար, իրբեւ մարսելի հոգեւոր սնունդ:

Վարժուհիի վեհաճնութիւն. — Շատ անգամ առիթ կ'ունենաք զբաղելու վարժապետի կամ վարժուհիի անվճար մնացած ամսականի խնդիրներով: Ընդհանրապէս զպրօցի պաշտօնեաներն են որ, աշխատին չաշխատին, ամսական առնելու անփոյթ չեն վարուիր: Ծանօթ է արգէն եւ առածի կարգ անցած բանաձեւը Ուղղական, սեռական ամսեզուլիս ամսական, Անականալ ու անսովոր գոհունակութիւն մ'է որ կը զգանք լսելով պարտաճանաչ ու ուղղամիտ վարժուհիի մը վարմունքը՝ զոր մեր ուսուցիչներու ուշադրութեան կը յանձնենք: Ծանր հիւանդութիւն մը հարկադրած է Օր. Յ. Ս. Վարժուհիին երկու ամիս անկողնի ծառայել: Ապաքինումը վրայ հասնելուն, ժամանակ մ'ալ կը շարունակէ իր պաշտօնը՝ մինչեւ որ յաջորդ մը դաճուի, եւ տկարութեան պատճառով, կըստիպուի թողուլ իր պաշտօնը: Հրատեչտի օրը զինք կը գտնենք հոգաբարձութեան սենեակը ուր հրաւիրուած է իր պահանջները գանձելու: Հոգաբարձութիւնը վարժուհիին 4 ամսականները կը հանէ կը վճարէ, բայց Օրիորդը կը մերժէ հիւանդութեան 2 ամիսներուն թոշակը առնել եւ ընկալադրին վրայ կը գրէ այս բառերը.

«Հիւանդութեան 2 ամիսներուն չախսեցայ, հետեւաբար իրաւունքս չե չախսասած՝ ստակ առնեք»:

Եւ հոգաբարձութեան և վարչական ուրիշ մարմիններու ստիպումներն ու թախանձանքները չեն բաւեր համոզելու այս վեհանձն վարժուհին:

Պատիւ այսպիսիներուն:

(Եւ — նշանակելի պարագայ — այդ վարժուհին Պոլիս վերադառնալու համար իր ծնողաց զրամին պէտք ունեցաւ.)



ԳՐԱԿԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՏԱՂԱԶԱՓՈՒԹԻՒՆԸ

(Շար. Բիւրակցի 9 բիւէճ)

Է.

ԱՄՓՈՓՈՒՄ

Այն տաղաչափական ազատութիւնները որոնք գործադրելի են առհասարակ, վերոյիշեալ հինգ պատահումի մէջ ամփոփուած են: Դեռ ուրիշ մանրամասնութիւններ ալ կը գտնուին թէեւ, սակայն անոնք անհրաժեշտ չեն Օսմաներէնի համար:

Ձափերու ցանկին մէջ տեսնուք որ ոտանաւոր մը այլ եւ այլ չափերու վերայ կրնայ ձեւուիլ, օրինակի համար, մէկ տողը չորս մեֆա'րիլներ, չորս միւսքեֆ'րիլներ, երեք ֆա'րլաքիլներ եւ մէկ ֆա'րիլներ չափերով եւայլն. հետեւաբար երբ ոտանաւոր մը չորս մասի վրայ հիմնուած չափով ըլլայ, կրնանք կոչել դայն բաւամասնեայ, եթէ երեք մաս պարունակող չափի մը վրայ ձեւուած ըլլայ՝ եւամասնեայ, իսկ եթէ երկու մասէ բաղկացած ըլլայ՝ երկմասնեայ: Այս անուանումները մենք սահմանեցինք որոշ գաղափար մը տուած ըլլալու համար:

Ինչպէս Ե. հատուածին մէջ ըսած էինք արդէն, ոտանաւորին իւրաքանչիւր մասերուն ստորաբաժանումները՝ իր պատկանած չափին մասերուն ստորաբաժանումներուն հետ համաձայն պէտք է ըլլան տառերու թիւին եւ անոնց ձայնանիշ ունենալուն կամ չունենալուն տեսակէտով: Անհրաժեշտ չէ իւրաքանչիւր մասը ամբողջ բառերէ կազմել, հապաներելի է միշտ ոտանաւորի տողի մը առաջին մասը լրացընել յաջորդ բառին ստորաբաժանումովը, կամ՝ երկրորդ մասը նախընթաց բառին ստորաբաժանումովը: նոյնը իմա՛ միւս մասերուն համար ալ. օրինակ.

« կէօզ կէօ զօլտու = ֆա'րլաթիւն = ճիւէրլոմ կէօզ = ֆէ'րլաթիւն = լէրինին տէր = ֆէ'րլաթիւն = ախնտէն = ֆէ'լիւն », հոս կը տեսնուի որ մասերը՝ ա-

ռաջինէն զատ՝ յաջորդ կամ նախընթաց բառերուն ստորաբաժանումներովը լրացած եւ այդ կերպով հիւսուած են: Ազատութիւն մը որ ոտանաւոր գրելու մասին մեծ զիւրութիւն կ'ընծայէ:

Ասկից զատ պէտք է գիտնալ թէ, ինչպէս որ արարական սարճի համեմատ մեքրուպ՝ մեքուզ, ֆեարիպ՝ ֆաիլ, միւսքեիլմիպ՝ միւսքեֆիլ ձեւերով են և այսպէս կը կոչուին, նմանապէս տաղաչափական օրէնքով ալ, միւլեմմէլթր, որ ստորաբաժանումներու կազմութեան տեսակէտով մեֆա'րիլներ հետ համաչափ է, կը կոչուի մեֆա'րիլներ չափով, նոյնպէս ֆեիլթր՝ ֆե'ուլիլներ, մուգքեիլմիլ միւսքե'րիլներ եւ կեիլթր կիւն ֆա'րլաքիլներ ձեւով են եւ այսպէս կը կոչուին:

Ը.

ՅԱՆԳ (1)

Յանգը երկու տեսակ է. պարզ (2) եւ բարդ(3):

Եթէ վերջաւորութեան մէկ տառ միայն յանգ նկատուի, պարզ յանգ կը կոչուի. օրինակ,

« Իթմէ՛ ըզհարի հիւնէր իթմէյէ մէճ-լիստէ հէվէս »

« Պիւլպիւլէ տամի պէլա օլտու լիօ սանրլա գաֆէս »:

Հոս երկու տողին ծայրը գտնուած սին վերջնատառերը միայն կը կազմեն յանգը, հետեւաբար պարզ յանգ է:

Յանգատառը կը կոչուի ռեվիլ (5), յանգատառերէն անմիջապէս առաջ գտնուած տառերուն ձայնանիշներն ալ համասեռ ըլլալու են. ինչպէս որ վերի սին տառերէն անմիջապէս առաջ գտնուած վալ եւ ֆե տառերուն ձայնանիշները համասեռ, այսինքն երկուքն ալ ֆեքիլայի խաֆիլֆե (ե) են: Ի հարկին ծանր ձայնանիշով (6) կարգացող տառերուն ձայնանիշը թեթեւի վերածել ներելի է. հետեւաբար երբ պարս. քիմ բառին հանդէպ արար. յլամմ բառը յանգ ընենք, այս վերջինը կ'արատասենք դիմ, կրկնակն ալ զանց ընելով. նոյնպէս պարս. քիմ բառին հանդէպ արար. սաֆի բա-

որ իբր յանգ զնկող, կ'արտասանենք սեֆ. նոյնը իմա՛ ուրիշներուն համար ալ :

Իսկ բարդ յանգը այն է, Ա. որուն ամբողջութիւնը կը կազմին յանգատառէն առաջ գտնուած մէկ կամ աւելի տառեր. կամ Բ. յանգատառէն ետքը կուգայ մասնիկ կամ բառ, որոնք կը կըրկնուին իւրաքանչիւր տողին կամ տունին վերջը. օրինակ,

(7) « Ալաը մէվլա կէօնլումին էն սէվկիլի լէյլասընը »  
« Նակէհան ախլանէ կէօնլում ալաը ես մէվլասընը »

Հոս բուն յանգատառերն են լիլլա և մկվլա բառերուն ելիֆները, որոցմէ առաջ իբր յանգը լրացնող տառ կը գտնուուի լեամ. նոյնպէս յանգատառէն ետքն ալ կը գտնուի սընը մասնիկը. ինչպէս այս օրինակէն հասկցուեցաւ, միւսնոյն յանգի մէջ կըրու պարագան ալ կրնայ միանալ. Օսմ. բանաստեղծները այս տեսակ յանգերով ի միջի այլոց շատ մը բնատիր վազիթներ և գասիթներ գրած են :

Բարդ յանգի մէջ յանգատառէն անմիջապէս առաջ մերթ կը գտնուին ելիֆ, վալ, եէ ձայնաւորները, պեհար<sup>(9)</sup>, մուր\* եւ սիյ<sup>(10)</sup> բառերուն պէս : Բ. Մերթ բաղաձայն տառ միայն կը գտնուի, քենկ<sup>(11)</sup> եւ ահեկ<sup>(12)</sup> բառերուն պէս : Գ. Երբեմն ալ յանգատառէն անմիջապէս առաջ որ և է բաղաձայն տառ մը եւ անկէ առաջ ձայնաւոր մը կը գտնուի, պեհար<sup>(13)</sup> եւ բանի<sup>(14)</sup> բառերուն պէս, որոնք եթէ ստանաւորի մը մէջ իբր յանգ գործածուին, վերջի 'այնը բուն յանգատառ է, ուրկէ առաջ բաղաձայն տառ եւ նախընթաց ձայնաւոր մը կը գտնուի, յարակից յանգերն ալ այս կազմութիւնը պէտք է ունենան :

Յանգերուն վերջը գտնուած թուրք.

\* Արաբները տուն և սիյն բառերը յանգ կ'ընեն իրարու հանդէպ, իսկ պարսիկները ի հարկին էլիֆ և վալը եէի փոխելով հիսապը կ'արտասանեն ու կը գրեն հիսիյա, եւ սիյալի հետ յանգ կ'ընեն. բայց Օսմաներէնի մէջ ներելի չէ ասիկա :

ձայնաւորները՝ ի հարկին պարս. կամ արաբերէն ձայնաւորներու հանդէպ կըրնան երկարիլ. օրինակ,

(15) « Կիւլլէրտէ օլուր պու բէնկի տիլ-նո՛ւ »  
« Հաղզըն պիղէ պիր ադասը տըր պո՛ւ » : (\*)

Ուրիշ մը,  
(16) « Իլա՛հիյ, փատիշէհյէր փատիշահի՛յ »  
« Նէ՛ հայրէթպալաշ՝տըր սուն՝ուն իւլահի՛յ » :

Մտորագծուած յոնգերը որ թուրքերէն են, պարսկ. կամ արաբերէն ձայնաւորներու պէս երկարելով կարգացինք. ըստ այսմ՝ թուրք. ձայնաւորները իբր յանգատառ ի հարկին պարսկ. եւ արաբ. ձայնաւորներու պէս կը գործածուին արտասանութեան տեսակէտով :

Յանգերէն զատ, մէջտեղն ալ թուրք. ձայնաւորները երբ չափու լրացուցիչ տառ նկատուին, այս կերպով կ'երկարին որքան ալ տնտովոր և անհաճոյ ըլլայ :

Միւսնոյն բառեր կամ մասնիկներ իւրարու հանդէպ յանգ չեն կրնար կազմել. այն ստեղծ ներելի է միայն, երբ նշանակու թեամբ իրարմէ տարբերին. օրինակ,

(17) « Սէվտիլիմ, պագ պու նէ՛ միւհլիք եարէ »  
« Եաղըչըր մը պուսու աչմագ եարէ »  
հոս առաջին եարէ կը նշանակէ վէրք, իսկ երկրորդը սիրական իմաստով եար բառին տրակամն է, հետեւաբար նշանակութեամբ իրարմէ տարբեր են :

Չարմանալի է որ Հայերէնի մէջ յաճախ կը տեսնենք որ խօսուե, գործեւ և նմանօրինակ միւսնոյն մասնիկով վերջաւորուած բառերէն յանգ կազմուած է : Օսմ. դրականութեան նախորդ չրջաններուն մէջ ալ երբեմն այսպիսի անպատեհութիւններ եղած են : Պարսիկները, խեհեան, լիզան և նմանօրինակ ան մասնիկով բայածականներէ ետեւէ ետեւ յանգեր կազմած են, միւսնոյն բանն ը-

(\*) Այս բառը կարելի է նաև պարս. նկատել «բոյր» նշանակու թեամբ :



բած է նշանաւոր պարսիկ բանաստեղծ Ճամի, բայց ժամանակիս ծանօթ Օսմ. բանաստեղծները կը դատապարտեն այդպիսի յանգեր գործածողները, բացառիկ քանի մը պարագաներ միայն ներելի համարելով, զորս չենք նշանակեր այս համոտ ուսումնասիրութեան մէջ: Նաև պէ, փե, դը, րե, սաս, սին և ասոնց պէս նմանաձայն, բայց տարբեր տառերէ յանգ կաղմել ալ ներելի չէ. ժամանակիս ծանօթ բանաստեղծներէն Իսմաիլ Սաֆա Պէյը թէեւ այս կէտը մեղմացնել ուզեց, բայց ընդունելութիւն չգտաւ. մինչդեռ Պարսիկ բանաստեղծները ճիւմ, չիւմ, պէ և վիւ տառերով յանգեր շինած են, ինչպէս նաեւ ի մէջ այլոց Զինա փաշայի քերթուածներուն մէջ ալ այդպիսի յանգերու կը հանդիպինք, թէեւ ինքն ալ առթիւ մը պախարակած է յանգի այս գեղձումը: Իսկ ասոնց հակառակ նուն հւ նեաձ իրարու հանդէպ կըրնան գտնուիլ և ի հարկին նունը նեաձի կը փոխուի, և փոխադարձաբար. օրինակի համար, (18) էլիմսէն ( ձեռքէդ ) և (19) քեմէլիմսէն ( հիմէն ) բառերը իրարու հանդէպ իբր յանգ գտնուելով կրնան գրուիլ առաջինը (20) նունով, կամ ի հարկին երկրորդը (21) նեաձով:

Պարսիկները խօս(22), խօր(23), խօս(24) եւն բառերը առանց վալի կարեւորութիւն տալու կ'արտասանեն գրեթէ խե, խը, խե ձեւով, և ի հարկին պե, սը, ֆե և նմանօրինակ բառերու հանդէպ իբր յանգ կը գործածեն, սակայն օսմաներէնի մէջ ներելի չէ այս, թորք արտասանութեամբ միայն կը գործածուին:

Շարունակելի Ս. ԿՈՒՐՏԻԿԵԱՆ

1. قافیه . 2. قافیه مجرده , 3. قافیه مرکبه
4. ایتمه اظهار هنر ایتمکه مجلسده هوس  
بابله دام بلا اولدی لسانيله قفس
5. روی 6. حروف ثقیله
7. آدی مولا کولکمک اک سوکیلی لیلانی  
ناکمان دیوانه کولکم آدی یا مولاسنی

8. بهار 9. مور 10. سیر 11. تنک
12. آهنگ 13. بدایع 14. راجع
15. کلرده اولور بو رنگ دلجو  
حقک بزہ بر عطا سیدر بو
16. الهی پادشاهلر پادشاهی  
نه خیرتمبخشدر صنعک الهی
17. سودیکم باق بو نه مهلاک یاره  
یا قیشیرمی بونی آحق یاره
18. الکن 19. تمکندن 20. الندن
21. تملکندن 22. خود 23. خور 24. خوش

ԿՈՒՐՏԻՆ ԵՐԳԸ (TRIOLET)

Գեղգեղի՛ յաւերժ, կո՛յս գողօրիկ, սիրուն,  
Ոյժ տուր ֆու ձայնիդ, երգիդ սիրավառ,  
Յուզի՛ արսիկներ, վերացու՛ր նեռո՛ւն,  
Գեղգեղի՛ յաւերժ՝ կոյս գողօրիկ, սիրուն:

Հոգևոյս ցաւերը՝ երգերդ քրքրուն  
Կը ցուեն յաւե՛ս եւ արթս խաւար,  
Գեղգեղի՛ ուրեմն, կոյս գողօրիկ՝ սիրուն,  
Ոյժ տուր ֆու ձայնիդ, երգիդ սիրավառ:

Խարբերդ Ս. Շ.

ՅՈՒՇԵՐԳ

Տօն գիշեր մը եարիս պաղջան  
Գլխիս գըրած պաղ մի քար,  
Տակս էր տղմուտ երկինքն ալ մութ  
Բայց սիրտս արեւ ցաթած կար:  
Մինակ չէի, եարս ինձի մօտ  
Սիրոյ պէտքերս կը հողար.  
Անժամ արբած սիրոյ բաժկէն  
Սիրտս իր ցաւեր չէր ըզար:

Սրեւմարքին երբ գողի պէս  
Մըտայ պաղջան իմ եարին,  
Բոլոր ծառերն ու ծաղիկներ  
Ինձմէ պահուիլ միտք ըրին,  
Բայց երբ գողտուկ սնէն փախաւ  
Եարս եկաւ քովս, տակ ծառին ,

Ծառ ու ծաղիկ խոնարհելով  
« Բարի՛ եկիր » մաղթեցին :

Ծառ ու ծաղիկ անկից ի վեր  
Ինձի եզան բարեկամ,  
Ուր որ տեսնեն զիս, միշտ կ'ըսեն  
« Ո՛ւր է եարբդ սիրական,  
Որ կուտար քեզ լի բաժակներ  
Սիրամական՝ հոգեկան,  
Եւ կը շոյէր գլուխդ կրծին  
Վըրայ սեղմած պինդ այնքան : »

Սակայն, բարէ՛, ծառ ու ծաղիկ,  
Սրտիս կուտան յոյզ, վըթար,  
Երբ կը յիշեն այն գիշերը՝  
Եարս ալ ինձ մօտ հոգատար :  
Եարբս հիմակ է բացակայ  
Երկնքի տակ հոն՝ օտար,  
Ու չկայ բան մ'որ տայ ըսփոփ  
Սրտիս, հառչող անդադար :

Յ. Մ.

### Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ

Մարդուն մէկը մեծ գանձ դիզեց,  
Հոգին ծախած սատանի .  
Բայց մի օր էլ սիրտը ուզեց  
Դըրախտ գընալ . . . Ի՞նչ անի .

Նա միտք արաւ մի ժամ շինել  
Խեղճ, յետ ինկած հայ դեղում .  
Եւ այդ ճամբով աթոռ գընել  
Արքայութեան մէջտեղում :

Գեղացիք էլ՝ ուրախացած՝  
Հէնց լըսեցին այդ համբաւ,  
Գիւղի բերքից հետերն առած՝  
Նդ ու կարագ, ճուտ ու հաւ՝

Բարեգործին բերին ընծայ  
Եւ զօ՛ւ տըլին օրհնենքին .  
« Աղա՛, Աստուած ճէպիդ ուժ տայ,  
Դըրախտ երթայ քու հոգին . . . » :

Բայց մի գիշեր, ազան քընած՝  
Յանկարծ տեսաւ երազում—  
Ժամը պատրաստ . . . իսկ ինքն ընկած՝  
Դըժոխքի սեւ կարասում . . . :

Եւ Սատանան զլիուռն վերեւ  
Փըշփըշում էր ականջին .  
« Ա՛, բարեկամ, դալըդ բարեւ,  
Յանկալի՛ հիւր մեր միջին » :

Ազան սոսկաց . . . « Վա՛յ իմ փողեր,  
Վա՛յ, խարուեցա՛յ » նա գոռաց,  
Եւ երբ դարթեց, շա՛տ ուրախ էր,  
Որ դեռ ժամը չէր շինած . . . :

Ա. Գ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

### ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐ ԵՒ ԳՈՒՇԱԿՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐ

ԹԱԼԱՍԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԷՋ

— Երբ քալած ատեն ոտնամանը ոտ-  
քէն ելլելով ետ մնայ, ան մարդուն մօ-  
տալուտ մահուան նշան է :

— Եթէ տղան եղունգի վրայ սպիտակ  
բիծեր ունենայ, բարեբախտ կ'ըլլայ :

— Երախային պորտը կտրելով կը նե-  
տեն հոն, ուր կը փափաքին որ տղան  
յաճախէ ապագային :

— Երբ երախան միշտ նիհար ըլլայ,  
եւ վերջապէս չապրելով մեռնի, թըղ-  
պայէն է, եւ քառսուն տունէ մէջմէկ  
տեսակ կերպասի կտորներ ժողովելով՝  
հագուստ կը կարեն եւ թղպայով տղուն  
կը հագուեցընեն, որպէս զի թղպայէ ա-  
զատի եւ ապրի :

— Երբ յղի կինը ձեռքին հինայ դնէ,  
ծնելիք երախային եղունգներն ալ հի-  
նայով ներկուած կ'ըլլան :

— Եթէ քնատի անկողնի բարձին տակ  
օձի խորիս դրուի, քնատութիւնը կ'ան-  
հետանայ եւ շատ կը քնանայ :

— Երբ մէկը չուղած կամ չըրած մէկ  
բանը ընէ զիպմամբ, պատին շիւղ մը կը  
խօթեն, որպէս զի սատանան չլսէ եւ  
չսթափեցնէ զնա իր հակառակ բնաւո-  
րութենէն :

— Երբ հիւանդ մը մահուան անկողնի  
մէջ ընդերկար տառապի, գերեզմանէ  
հող կը բերեն եւ վրան կը ցաննեն, որպէս  
զի շուտ մեռնի, եւ եթէ հոգեվարքի



մէջ տառապի, իր պանդուխտ սիրելիին նամակը կամ ուրիշ առարկայ մը հողե-վարին կուրծքին վրայ կը դնեն որ կա-րօսն առնէ եւ հողին աւանդէ:

— Եթէ ջուրի հոսանքի (վաղըի) ծայրը համբուրէ մէկը գետնամած, ստակ կը դանէ:

— Ծննդարեւութեան առաջին քանի մը օրերուն մէջ երբ հացը տաք տաք փուռէն տուն դայ, նորածինի ճակատէն ոսկի մը կը կախեն որպէս զի երախան ղեղին չըլլայ:

— Երբ երկու մարդիկ մտաղիր են խօսիլ միեւնոյն խօսքը եւ մին միւսին կանխէ խօսիլ՝ կանխողը միւսէն աւելի երկարակեաց կ'ըլլայ:

— Տղու մը զագաթին մտղերը եթէ խառնակ են՝ տղան չարածճի կ'ըլլայ:

— Երբ շուն կամ կատու տան դրան վրայ միզէ՝ բարի է եւ բարի լուր կուգայ այն տան:

— Երբ ծիրանի դօտի տեսնուի, բարի է եւ արգասաւոր, իսկ եթէ ծիածանի ծայրերէն մին դէպ ի գերեզմանատուն ուղղուած ըլլայ, շատ մահ կը պատահի:

— Եթէ երախան մօրէ թլփատեսլ ծը-նի՝ բարեբախտ կ'ըլլայ:

— Եթէ մէկը շերեփով ջուր խմէ, իր հարսնիքին օրը անձրեւ կը տեղայ կամ ձիւն:

— Եթէ այր մարդու գլխարկը կնկան մը գլուխը դրուի, կնկան գլխուն մա-ղերը կը թափին:

— Երբ խեղանդամի մը կամ վիրա-հատութեան վրայ խօսուի «վրայէն հե-ռու» կ'ընեն, եւ երբ մարմնի անդամ-ները ցուցնել պէտք ըլլայ «քար կը չափեմ» ըսելով կը բացատրեն:

— Երբ անձրեւաբեր ամպեր կուտակ-ուին օրերով, եւ չտեղայ, օղը կախարդը-ուած է, ուստի երեք անգամ ամուս-նացած մարդու տունէն խմորը գաղտնի դողնալով՝ ամանովը ջրհորի մէջ կը ձգեն որպէս զի կախարդանքը լուծուի եւ անձրեւ տեղայ: Եթէ խմորը ջրհոր չձը-գին, կախարդանքը քառասուն օր կը տեւէ եւ չ'անձրեւեր այս միջոցին:

— Այն տունն ուր աղանետուն կայ ու աղանետին վուլու կ'ընէ կամ կնճիթ տնկուած է, սերունդը չ'ածիր եւ ընտա-նիքը չի դարդանար:

— Երբ լուսինը խաւարի, հրացանա-ձրղութիւն կ'ընեն որ լուսինը թնդիւն-նեքէ խրտչելով դուրս ելլէ իր խաւար քողի տակէն:

— Եթէ գարունը տղաք դնակ խա-ղան, ցանքը չ'ածիր եւ հունձքը չ'ա-ռատանար:

— Երբ հաւերը փրենց ոջիւները մաք-րել սկսին, անձրեւ կը տեղայ:

— Պահարանի կամ դրան փեղկը երբ ինքնին ճարճատի, լուր կուգայ:

— Երբ մէկը վարտիքը անկողնի սը-նարը դնէ, դիչերը մղձաւանջ (գարադու-րա) կը կոխէ:

— Երբ երկու մարդիկ միասին ջուր խմեն, մէկուն խմածը թարախ եւ միւ-սինը արիւն կ'ըլլայ:

— Երբ մէկուն աչքը պաղի, հիւր կամ լուր կուգայ:

— Եթէ մէկը աւելով մէկուն զարնէ կամ վրան մաքրէ՝ անոր մեղքը իր վը-րայ կ'առնէ:

— Կերակուրի աւելցուքը ուտէ մէկը, նշանածը դեղեցիկ կ'ըլլայ:

— Եթէ մէկը իրմէ պղտիկին ձեռքը ջուր թափէ, փոքրիկին ձեռքերը դող-դոջուն կ'ըլլան:

— Երբ մէկը ճապկտի (ճողկտիլ), մօտը կեցողը կը թքթքէ անոր վրայ, որպէսզի անոր ծանրութիւնը իր վրայ չ'թափի:

— Երբ հաւը աքաղաղի պէս խօսի, մահ կը պատահի այն տան մէջ: Ուստի եւ կը գլխատեն դայն:


— Եթէ սեղանի վրայ հացի պատա-ռիկ աւելցուի, աւելցնողին գլուխը կը ցաւի:

— Երբ հաւերը կտուց կտուցի դան խօսակցելու պէս, լուր կուգայ:

— Համբարձման տօնին երեկոյին՝ (ըստ ժողովրդեան՝ վարդավառ անուանուած տօնին) աղջիկներ ու հարսեր ցօրենի ծղօտներ տակովը կը քակեն կը բերեն,

ու հասկերը կտրելով ծղօտները ջրալից ամանի մը մէջ կը դնեն և այլեւայլ դոյնէ մետաքսաթելերով իւրաքանչիւր ծղօտի ծայրէն կը կապեն զանազան խնդիրքներ ընելով ու կը թողուն ամանին մէջ, Առաւօտուն, տօնի օրը հաւաքուելով՝ ցօղուններուն կը նային, եթէ ասոնք կտրուած ծայրէ նոր ծիւեր արձակած են՝ իրենց խնդիրքը ընդունելի է, իսկ եթէ չեն ծլած՝ անընդունելի։ Ապա հաւաքաբար ներկաներէն իւրաքանչիւրը խնդիրք ընելով այլ եւ այլ իրեղէններ կը ձգեն ցօղուններու ջուրին մէջ, ո՛րը դանակ, ո՛րը մատնի, ո՛րը մատնոց եւն, Եւ ապա մօր մը անգրանիկ մանուկը, 7-8 տարեկան, կը բերեն եւ գլխուն վրայ կտաւ մը կը ծածկեն որ առարկաները չտեսնէ ջուրի մէջ և ներկաները չճանչնայ։ Ա.գա կը սկսին յատուկ երգերը երգել։ Մանուկը իւրաքանչիւր երգի տունը աւարտելուն, ջրէն կը հանէ կուտայ իրեղէն մը, երգուած երգի իմաստը կը համապատասխանէ այն առարկային խնդիրքին։ Այսպէս շարունակ իւրաքանչիւր տուն (երգի) կ'երգուի մինչեւ որ ամանին մէջի իրերը հասնին։ Այս խնդիրքը փորձը այն օր իրարու ետեւ երեք անգամ կը կատարուի իւրաքանչիւրի իրերը երեք անգամ ջրի մէջ ձգելով եւ երգելով հանելով։ Այսպէսով խնդիրք ընելու արարողութիւնը կը լրանայ։ Այս ծղօտները գետին չեն նետեր, այլ կողի մը կը կերցնեն։ Այս արարողութիւնը որ կատարուեցաւ Համբարձման տօնի օրը (կամ ըստ ժողովրդական անուանման «Վարդավառ յի տօնին») յաջորդ վեց կիրակի օրերն ալ կը շարունակեն միեւնոյն գործողութիւնը, որով Վարդավառի խընդրարկութիւնը եօթն անգամ կրկնուած կը լինի։

Կ. Գ. ՔԵՐԹՄԵՆՅԱՆ

 Դաւթեան Գործակալութիւնը իր գրքերուն գեղչը 0/15ի իջեցուցած է։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆ

ՃԱԿԱՏԱԳԻՐ

(Հեկեաթ)

Հինում է մի հարուստ մարդ։ Այդ մարդը ճակատագրի մասին շատ հէքեաթներ էր լսել ու շատ էր փափաքում տեսնել այն մարդկանց, որոնք մարդուս ճակատի վրան գրում են. նա մէկ անգամ հիւր ընկաւ մի գիւղում և ճակատագրի մասին մտածելու ժամանակ՝ տեսաւ որ մի անից կրկու աներեւոյթ մարդ դուրս եկան։ Սա զնաց նրանց մօտ և սասց. «Ո՛վ մարդիք, դո՞ւք էք ճակատի վրայ գիր գրողները։» Նրանք էլ պատասխանեցին և ասացին. «այո՛, մենք ենք»։ Մարդը նրանց ասաց. ինչո՞ւ էք եկած այս տունը. նրանք ասացին. այս տեղ նորածին մանուկ կայ, եկել ենք նրա ճակատը գրել և նրա ճակատին գրեցինք, որ նա մեծանայ ու այն հարուստի կալուածներին տիրանայ, որը այժմ այս գիւղում հիւր է։ Մեր մարդը սաստիկ շփոթուած՝ ներս էջմտնում նրանց տունը և առաջարկում է նորածին մանուկի ծննդներին որ ինք կամենում է նրանց նորածին որդուն զնի, նրա ճանրութեամբ փող տալով։ Մանուկի ծնողները աղքատ էին և երբոր փողի անունը լսեցին, իսկոյն համաձայնուեցին. ու նրա ծանրութեամբ փող աննելով իրանց անմեղ որդուն տուին հարուստին։ Հարուստը վերցնում է երախային և դուրս է գալիս փողոցը։ Նա կանչում է մի մշակի և ասում է. «Եթէ տանես այս երախային գիւղից դուրս սոյանանես և նրա շուրերը արխնաթաթախ ինձ բերես, քեզ 10 բլի կտամ։ Մշակը համաձայնում է։ Նա երախային տանում է դաշտը, մի փոքրիկ բնակարան է շինում նրա համար և նրան դնում է անոր մէջ։ Այն տեղ՝ լինում է մի արածող հօտ. նա բռնում է մի այծ, ծիծը երդկից կախ առնում և երախան սկսում է ծծել, այժն էլ կարծում է թէ իւր ունի է այնտեղ և միշտ գալիս է այն տեղ ու ծիծը կախ



անում հրդեհից : Այն մշակը բռնում է մի ուրիշ այծ , ականջը կտրում է և երախայրի շապիկը արիւնստեղով տանում է հարստի մօտ . նա էլ հաւատում է նրան և մի քիչ հանգստանում է : Անցնում է մի քանի օր և այծի տէր պառաւը սկըսում է որոնել իւր միակ հատիկ այծին ու գտնում է նրան մի փոքրիկ սնակի մօտ : Նա ներս է նայում երդկից և զարմանում է , որ տեսնում է մէջը նստած մի երախայր : Իսկոյն վերցնում է նրան ու տանում է իրանց տունը և նրան անուանում է « Թափարդ » որ կը նշանակէ գտնուած : Այդ երախան շատ սիրուն է լինում և առոյգ , մօտ 10 տարեկան : Այն հարուստն որ ուզում էր նրան սպանել տալ , մի անգամ այդ դիւղը հիւր է գալիս պառաւի մօտ : Պառաւը սկսում է կանչել « Թափարդ » , այս անունը լսելով հարուստը վեր է թռնում և հասկընում է որ այս այն երախան է , որին մշակը չէր սպանել : Նա մի նամակ գրում է իւրեանց տունը և պատուիրում է թէ « Երբ նամակաբերս հասնի , ձրեցէ՛ք թոնիրը և այրէ՛ք » , և նամակի ծըրարը փակելով՝ տալիս է գեղեցկադէմ , նորափթիթ սպտանուն , որ իւրեանց դիւղը տանէ : Պատանին տանում է և համեղով հարստի տան առջեւի պարտէղին , սլաղում է մի քիչ հանգստանալու և քունը տանում է : Այդ ժամանակ , հարստի փոքրիկ աղջիկը գուրս է գալիս՝ այգին դբօննելու և տեսնում է քնած տղային , գրպանի մէջ էլ երեւում էր թղթի կտորը , նա հետաքրքրութիւնից հանում է թուղթը և կարդում է , բայց շատ է խղճում այդ տղայի վրայ և նամակի միտքը իսկոյն փոխում է ու նորից գրպանն է դնում : Պատանին զարթնում է և նամակը յանձնում է տանտիկնոջ : Նա նամակը կարդում է թէ չէ , հարսնիքի պատրաստութիւն է տեսնում , որովհետեւ նամակում գրուած էր թէ , « Երբ նամակաբերս կը հասնի , հարսանիք արէ՛ք մինչեւ իմ գալը » : Այդպէս էլ լինում է : Այդ միջոցներին հարուստը վերադառնում է և տեսնում է , որ

փոխանակ սպաննելու , նրան ամուսնացրել են իր աղջկայ հետ : Այս բանի վրայ շատ է զայրանում և ամառը հնձողներ վարձելով , նրանց պատուիրում է թէ « Ո՛վ որ ձեզ համար առաջին անգամ հաց բերէ նրան սպաննէ՛ք , եթէ որ նա ստէ թէ աղէն եմ , դարձեալ կը սպաննէ՛ք , և ճաշուայ հացը պատրաստելով առաւօտը շուտով տալիս է իւր նոր փեսային և ուղարկում է արտը : Նա եկեղեցու մօտով անցնելու ժամանակ , հացը դնում է ցած ու մտնում եկեղեցիին երգելու : Կէս օրուայ մօտերը հարուստը ուզում է գնայ , տեսնի , արդեօք սպաննե՞լ են փեսային թէ ոչ . բայց եկեղեցու մօտով անցնելիս , տեսնում է հացը այն տեղ զրած , իսկ փեսան չկայ : Նա կարծում է թէ փախել է և հացը վեր է առնում ու ինքն է տանում : Հնձուորներն հէնց նրան էին սպասում . հասաւ թէ չէ , իսկոյն թափուեցան վրան ու զլխատեցին : Այս միջոցին նա շատ էր բղաւում թէ « աղէն եմ , » բայց լսող չկար : Այսպիսով այն տղան արժանացաւ այն հարստի բոլոր կալուածներին :

Պաւլեմ 2. ՀԱՅՐԱՊԵՏԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Հ Ո Գ Ե Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

(Ամփոփում)

Մանկավարժութիւնը Հոգեբանութեան մէջ ունի իւր հիմն ու խարխիւր : Արդէն բոլոր բարոյական և քաղաքական գիտութիւնք չեն կրնար անոր նպաստէն զրկուիլ , ու Մանկավարժութիւնն առաւել քան զամենայն :

Դաստիարակը գործ ունի տղուն իմացականութեան , սրտին ու կամքին հետ , վասն զի անոր մտաւորական կարողութիւնները ունի զարգացնել , անոր ըզ-

զացումները ազնուացնել, անոր նկարագիրը կազմել, Հետեւապէս կը հասկըցուի թէ ո՞րքան կարեւոր է անոր ճանչնալ մարդկային հոգին ընդհանրապէս ու մանկան հոգին մասնաւորապէս:

Հոգեբանութիւնը հոգւոյն դիտութիւնն է, ուսումն անոր երեւոյթներուն ու անոնց օրինաց, եւ իբր այդ կը հակադրի Բնախօսութեան, որ ուսումն է մարմնոյ կեանքին: Բայց հոգւոյն կեանքը զա՞տ ու որո՞չ է մարմնոյ կեանքէն. դիտենք որ կայ իմաստասիրական դրութիւն մը, Նիւթապաշտութիւնը, որ մի միակ սկզբունք կ'ընդունի մարդուն մէջ տեղի ունեցած բոլոր երեւոյթներուն, այն է մարմինը, եւ հաւասարապէս անոր գործունէութեան արդիւնք կը համարի հոգեբանական երեւոյթ կոչուածներն ալ: Բայց հոս, մենք առ այժմ չը պիտի քննենք այդ երեւոյթներուն սկզբբան խնդիրը, որ Բնագանցական Հոգեբանութեան կը վերաբերի: Փորձառական Հոգեբանութեամբ պիտի զբաղինք մենք, որ զննական դիտութիւն մ'է այնչափ՝ որչափ Բնագիտութիւնը կամ Բնապատմութիւնը, եւ որու առարկաները — մտքին խորհուրդները, սրտին զգացումները, կամքին որոշումները — այնքան զրական իրողութիւններ են որքան ո՞ր եւ է ֆիզիքական երեւոյթ:

Հոգեբանական երեւոյթները, ի՛նչ ըսկիզբ ալ ունենան, նիւթական թէ՛ աննիւթական, էապէս իրենց հանգամանքներով կը տարբերին բնախօսականներէն, հետեւապէս ծնունդ տուած են մի առանձին դիտութեան, որու օրինաւորութիւնը կ'ընդունին նիւթապաշտք ալ հոգեպաշտներուն չափ, թէպէտ անուրանալի է նաեւ երկու կարգ իրողութեանց, հոգւոյն ու մարմնոյն, բարոյականին ու ֆիզիքականին սերտ առնչութիւնն ու փոխադարձ ներգործութիւնքն: Բնախօսական իրողութիւնք, գործօրինակ՝ մարտողութիւն, շնչառութիւն, արեան շրջան, միջոցին մէջ կը կատարուին, ձեւ մ'ունին, զգայարանօք ու գործեօք զընների են ու ենթակայէն զատ զնների ու

զգալի են օտարներուն: Հոգեբանականք, ընդհակառակն, միջոցին մէջ տեղ մը չեն գրաւեր, ձեւ մը չունին, միայն տեւողութեան մէջ տեղի ունին ու միայն ենթակային գիտակցութեան զգալի են ուղղակի: Հետեւապէս նաեւ երկախայական են սոքա, մինչդեռ առաջինները՝ առարկայական: Բաց աստի, այս երկու կարգի իրողութիւնք իրենց վախճանովն ալ իրարմէ կը զանազանին. բնախօսականք նպատակ ունին մարմնոյ կենաց պահպանումը, մինչդեռ հոգեբանականաց վախճանն է բարոյական էակին զարգացումը, հոգւոյն դիմումը դէպի իւր վախճանները, երջանկութիւն, դիտութիւն, առաքինութիւն:

Հոգեբանութեան, իբրեւ գիտակցական երեւոյթներու գիտութեան, մէթոտը ներքնահայեցութիւնը, գիտակցութիւնն է: Մեր եսին ծանօթութեամբ միայն կրնանք ճանչնալ այդ երեւոյթները: Բայց եթէ մարդ միայն իր հոգեկան վիճակները գիտնալ կարենար, կարող չը պիտի ըլլար հոգեբանական գիտութիւն մը կազմել, վասն զի անհատական՝ անջատ երեւութից վրայ գիտութիւն չէ կարելի հիմնել. նման իրողութեանց մեծ թուէ մը միայն խելամտութեամբ կարելի է հետեւեցնել օրէնքներ. Ի՞նչպէս ուրեմն կազմուած է հոգեբանական գիտութիւնը: Պատասխան. — Մարդ թէեւ ուղղակի իր եսը միայն կրնայ գիտնալ, բայց այլոց եսն ալ հանգիտօրէն ու անուղղակի կերպով կրնայ ճանչնալ, անոնց գիտակցական վիճակները հետեւցնելով նոցա արտայայտութիւնքն եւ զոչ արտաքին ֆիզիքական նշաններէ, զորս իր ու այլոց վրայ նոյն կը գտնէ: Զոր օրինակ, գիտնալով որ մեր վրայ արցունքը՝ վշտի, ծիծաղը՝ ուրախութեան, ծնրադրութիւնը՝ պաշտաման, նայուածքի անշարժութիւնը՝ խորհրդածութեան կը պատասխանեն, միեւնոյն ֆիզիքական արտաքին երեւոյթներուն այլոց վրայ ալ պատահելով, կը խելամտենք անոնց մէջ ալ այդ արտաքին երեւութից համապատասխան բարոյա-



կան ներքին վիճակներուն գոյութեան : Այսպէս եւ ուրիշ պարագաներու համար , ու այլոց հոգին կը յայտնուի մեզ , ու կրնանք մենք զայն մերինին հետ բաղդատել ու ըմբռնել նմանութիւնները :

Լեզուն արդէն նշաններու ընդարձակ դրութիւն մ'է որ զմարդիկ հաղորդակցութեան մէջ կը դնէ իրարու հետ , խորհուրդի ու զգացման փոխանակութեան կարող ընելով զիրենք : Գրականութիւն ու պատմութիւն , հաղորդակցութեան մէջ դնելով զմեզ ամէն երկրաց ու ժամանակաց մարդկային հոգիներուն հետ , հոգեբանական գիտողութեանց դաշտը եւս առաւել կ'ընդարձակեն ու բաղդատութեան առատ նիւթեր կ'ընծայեն հոգեբանին : Հոգեբանագիտութիւն (Psychophysique) կոչուած նոր գիտութիւն մ'ալ , որ ենթակայական - ներքին երեւութից գործարանական պայմաններուն վրայ զիտողութիւններ ի գործ կը դնէ , եկած է նոր լոյսեր սփռել հոգեոյն ծանօթութեան վրայ եւ ճշդել ու մանրամասնել զայն տակաւ : Ներքին ու արտաքին գիտողութեանց վրայ կուգան յաւելնալ փորձարկութեանց արդիւնք , զի այս գիտութիւն , որպէս բնական գիտութիւնք , ընդունակ է փորձարկութեանց եւս , — ինչպէս երբ հաշիւին արդիւնքը կը փորձեմ իմ վերաս , կամ մանկավարժական նոր դրութիւն մը կը փորձեմ դպրոցի մը մէջ — եւ անա այսպէս օր քան օր կը ճոխանայ ու կը ճշգրտի հոգեբանական իրողութեանց գիտական ծանօթութիւնը :

Հոգեբանական իրողութիւնք բազմաթիւ են , բայց կրնանք երեք դասերու հետ ունեցած անչլութիւն-Ընդհանուր վերածել զանոնք . 1. Զգայնական իրողութիւնք , ինչպէս հաճոյք , ցաւ , ուրախութիւն , տրտմութիւն , յոյս , երկիւղ , բաղձանք , խորշանք , հիացում , պօգանք , եւ այլն : Սոյն իրողութիւնք նախապատճառն ու կրաւորական են : 2. Իմացական իրողութիւնք , ինչպէս՝ մտապատկեր մը , ընդհանուր գաղափար մը , գաղափարաց շղթայում մը եւլն . սոքա

ալ նախապատճառն , բայց գործօն : « Ճակատագրային » ըսելով կը հասկնանք վիճակ մը կամ գործողութիւն մը որ մեր կամքին չի հպատակիր : Արդարեւ մեզմէ կախում չունի այս կամ այն ազդեցութեան տակ հաճոյք կամ ցաւ զգալը , ոչ ալ մեր մտածութեան կերպը՝ որ մտքին անյեղլի օրէնքներուն հպատակ է : 3. Կամական իրողութիւնք , ինչպէս որոշողութիւնք , ճգունք գործադրութեան , յարատեւութիւն եւլն . սոքա գործօն են ու ազատ (ազդեցութիւն), վասնզի երբ կը գործենք կամքով , զմեզ հեղինակները կը համարինք մեր գործոց ու պատասխանատու անոնց :

Այս երեք կարգի հոգեբանական իրողութիւնները կը վերագրենք հոգեոյ երեք գլխաւոր կարողութեանց՝ իրեւելիքներնց պատճաններուն . — Զգայնութիւն , Իմացականութիւն եւ Կամեցողութիւն , Եզան իմաստասէրք , ինչպէս Մէն տը Պիրան , Ժուֆուա , Ատուֆ . Կանտիէ , (դարուս առաջին կիսուն մէջ) , որոնք այս կարողութեանց գրեթէ առանձին գոյութիւն մ'ընծայեցին , եւ ուրիշներ եզան յետոյ (Անգղիացի իմաստասէրք մանաւանդ , ու Թէն , Ռիպո Գաղիոյ մէջ) որք լով անուններ , ախտոսներ համարեցին զանոնք՝ հոգեբանական իրողութեանց երեք խումբերը նշանակող :

Սոքա կ'ամբաստանեն առաջինները թէ ուղած են հոգեոյն մէջ զատ զատ իշխանութիւններ ընդունել , իրարմէ անկախ , կարող իրարու հետ դաշնակցելու , բայց նաև իրարու հակառակելու , եւ այսպէս հոգեկան երեւութից փոխադարձ կապակցութիւնք , փոխանցումներն ու փոխակերպումները անտես կ'ընեն ու կը խըղեն անոնց միութիւնը : Բայց կ'երեւի թէ առաջիններուն տեսութիւնք չափազանցուած են , եւ եթէ վերջիններն ալ կը կարծեն թէ մեր հոգին անտարբեր դաշտ մ'է իր մէջ տեղի ունեցող վիճակներուն ու գործողութեանց՝ կը սխալին : Իրողութեան լաւագոյն մեկնութիւնք — եւ արդէն առաջինք իրենց մեկնութեանց մէջ կը մօտենան այս տես-

սութեան—պիտի ըլլար թէ մեր կարողութիւնք մի՛ եւնոյն հողւոյն, մի՛ եւնոյն զօրութեան՝ ըլլալու եւ դործելու զանազան ձեւերն են, զանազան ընդունակութիւնքն ու ոյժերն են, բայց թէ ինքը կարող է այդ ընդունակութիւններն ու ուժերը զանազան կերպով եւ իր նպատակներուն համեմատ լծորդել, կաղծակերպել, ուղղել, եզանակաւորել, բարեփոխել ու զարգացնել, Եւ ահա՛ այդ կարողութեամբքն է որ այդ զանազան ընդունակութիւնք եւ զօրութիւնք, որք առանց անոր լուկ յաօկութիւններ պիտի ըլլային, կը լինին մէկ մէկ կարողութիւններ։ Մանաւանդ դաստիարակութեան տեսակէտէն զիտելով՝ կարողութեանց այս կերպ ըմբռնումը կը հարկադրուի մեզ։ Նոքա դաստիարակելի են, ուրիշն ներգործող զօրութիւն մը կայ նոցա մէջ որով նոքա կրնան բարեփոխուիլ ներքին կամ արտաքին ազդեցութիւններով։ անձնական զօրութիւնը կը մտնէ մեր բոլոր մասնաւոր ընդունակութեանց կամ ոյժերուն մէջ, կը տիրանայ անոնց, ճշմարիտ կարողութեանց առաջնանին կը բարձրացնէ զանոնք։

Մեր կարողութեանց գիտական բաժանումը, Գերմանիոյ մէջ, Լայպնիցի աշակերտ Վօլֆի դպրոցէն ստացած է իւր վերջնական ձեւը։ Պշատոն արդէն հողւոյն մէջ երեք մասեր կ'ընդունէր։ Յանկուրիւն (մարմնական ակորժակք), Արիւսքիւն (ազնուական իղձք), եւ Իմացականութիւն։ Տէքարդ երկու կարողութիւն միայն կ'ընդունէր, իմացականութիւն եւ կամք, իսկ Պօսիւէ այս երկուքը կը նոյնացնէր, եւ իմացական ու զգայական գործողութեանց կը վերածէր հողւոյն կարողութիւնները։ Գանկարանք բազմամասն ու կնճոտ բաժանում մ'առաջարկած են. Գոնտիյեաք ամէն կարողութիւն զգացողութեան կը բղխեցնէր. անոր մօտ բան մ'է Հէրպարդ գերմանացւոյն զրութիւնը որ մտապատկերը կը դնէ ամէն կարողութեանց սկզբնակէտ։ Բայց, ինչ ինչ բացառութիւններէ զուրս, այսօր գրեթէ

ընդհանրապէս ընդունուած է հողւոյն կարողութեանց երբեակ բաժանումը։

Ընդհանուր հոգեբանութեան քով, որ կ'ուսումնասիրէ հասուն, քաղաքակիրթ ու առողջ մարդը, կայ բարդակաւ հոգեբանութիւնը, որ դէմ առ դէմ կը բերէ չափահասին հողւոյն մանկան հոգին, քաղաքակիրթին հողւոյն՝ վայրենւոյն կամ կիսակիրթինը, առողջին հողւոյն՝ հիւանդինը, եւ նոյն խակ մարդուն հետ քաղաքատեթեան կը դնէ անասունը, ու այսպէս փոխադարձաբար կը լուսաւորէ մին եւ միւսը, եւ հողւոյն գիտութիւնը ընդհանուր կերպով։

Այս քաղաքատեթեան եզրերէն մեր նպատակին համար ամենէն մեծ կարեւորութիւնն ունի Մանկան Հոգեբանութիւնը, որ նոր սկսուած գիտութիւն մ'է։ Մանուկն ընդերկար անտեսուած է. անոր հոգին իր ինքնուրոյն հանդամանքներուն մէջ չէ ուսումնասիրուած ընդերկար։ Հասուն մարդուն փոքրը համարուած է, մի եւ նոյն կարողութիւններն ունեցող, և տնական ու դպրոցական դաստիարակութեանց մէջ, մարդը իստապահանջ ու անիրաւ եղած է անոր նկատմամբ՝ անոր կարողութեանց զարգացման բնական ընթացքը խանգարած ու անոր երջանկութեան ծաղիկը թաւամեցուցած է։ Գրականութիւնը զուրս թողած է տղան, ու արուեստագէտը չէ զբաղած անով, կամ եթէ զբաղի ուզած է երբեմն, առանց հասկացողութեան ըրած է այդ։ Լուվուի մէջ կը տեսնուին մեծ վարպետներու նկարներու տղաք ալ մեծերուն զիմադութեամբն ու հազուատուր նկարուած են։ Մանկական տարազը նոր բան է։ Ռուսոտուաւ իր էմիլով առաջին զարկը համակրական ուշադրութեան՝ դարձած առ մանուկն։ Անոր բացած շաւղին մէջէն աւելի փորձառաբար ու արդիւնաւորութեամբ քաղցիւն Բեսթալտցցի ու Ֆրէօպէլ, ու անոնցմէ վերջ գիտուններ ու իմաստասէրներ (Տարվին, Գիտման, Բլոնզիէր, Պէսնար Բէռէլ, Թէն, Գոմբէյոնէ) իրենց համբերատար զիտողութիւնները



երեւան բերին, ու այս ամենէն կազմուեցաւ Մանկան Հոգեբանութիւնը, որ, այլ եւս հիմնուած, զարգանալու միայն կը կարօտի:

Այդ ուսումնասիրութիւններով ստացուած ճշմարտութիւններ առիթ պիտի ունենանք յարմար տեղերուն յիշեցնել մեր յաջորդ բանախօսութեանց մէջ, բայց այժմէն կ'ուզեմ ճշգրէ հիմնական կէտ մը. այն է մանկան հոգւոյն զարգացական շարժման եղանակը: Մալպարանչ, երեւելի Տէքարդեան մը, 17րդ դարուն մէջ, կը կարծէր թէ տղուն միաքը հասուն մարդուն մտաց բոլոր կարողութիւնքն ունի. անոր պէս բանականութիւն ունի, միայն փորձառութիւնը կը պակսի Ռուսի, կ'ընէր, կարելի է անոր սովորեցնել, խօսիլ սկսելուն պէս, ամենէն վերացական ու դժուարին գիտութիւնները: Այս կարծիքն այսօր կը ծրծաղեցնէ գմեղ, որ գիտենք թէ մանկան հոգին անկատար է ու կազմուելու վերայ. հասունին հոգին վերջնական տիրպի մը հասած է, բայց մանկանը զէպի այդ տիպը յստաջանալու ճամբուն մէջ է, հետեւաբար միշտ ձեւափոխուելու վիճակով: Բայց այդ ատիճանական զարգացումը ի՞նչպէ՞ս պէտք է ըմբռնել.— ո՛չ, յաշորդական ճննդեան մը (épigenèse) ձեւին տակ, իբրև թէ ինչ ինչ ժամանակներու մէջ ծնունդ առնուն անոր մէջ այս կամ այն կարողութիւնք որք նախ կը պակսէին ամբողջովին ու յանկարծ օր մը երեւան կուգան՝ տակաւ լրացնելու անոր թերիները: Ո՛չ. այսպէս մտածել բնութեան սովորական բնութայքին համաձայն չէ. ոչինչ յանկարծ, իբր յոչնչէ, կը ստեղծուի բնութեան մէջ: Բնութեան օրէնքը ատիճանական զարգացումը, բարեօրումն (évolution) է, որով ամէն բան կը յստաջանայ, կը զարգանայ նախնական անկատար դիճակէ մը ու տակաւ կը կատարելագործուի, ինչպէս հունար, որ հոգին մէջ իջնալով, հետզհետէ կ'երևցնէ ցօղուն, տերև, ծաղիկ, սրտիկ, ու կ'ուռճանայ ու կը ձիւղաւորի տակաւ: Այսպէս, մանկան հոգւոյն զարգացումն ալ բարելոյնումն մ'է:

Գ. Ն Ի Ս Տ

Կ Ի Ր Ա Կ Ը Օ Ր Ե Ս Յ Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ա Կ Ա Ն Դ Ա Ս Ը Ն Թ Ա Տ Բ Ի

Այս կիրակի՝ նախորդներէն բոլորովին տարբեր երկու դասախօսներու ունեցրեցին ներկաները: Նախ՝ առաջին դասախօսը, Յովսէփ Էֆ. Եռսուֆեան, հետեւեցաւ ուղղութեան մը որ բոլոր իր նախորդներէն կը տարբերէր, վասն զի այնքան ինչ կար խառնուած իր խօսքերուն մէջ իր անձնական փորձառութենէն որչափ կարելի է դնել: Երբէք ուսուցչական գիտութեանց ծագումն ու զարգացումը բացատրելու ժամանակ չկորսնցընելով՝ ուղղակի նիւթին ձևը զարկաւ, եւ հեղինակօրէն խօսեցաւ աւելի քան թէ հետեւողաբար:

Թուարանութիւնը գիտութիւններուն ամէնէն դժուարը նկատեց, եւ երկրաչափութեան կարեւորութիւնը ցուցուց մասնաւորապէս շեշտելով սա պարագան թէ՛ տղան աւելի շուտ կ'ըմբռնէ երկրաչափական պատկերներու դադափարը քան թէ հաշուելու կարողութիւնը: Գրաձաշիւր միաքը թմբեցնող գիտութիւն մը համարեց, յանձնարարեց զայն թուարանութեան հետ խառնել եւ երբէք առանձին չաւանդել: Վրաստուն երկու գլխաւոր թշնամի ունի, ըսաւ, որոնցմէ մէկն է ժամանակը եւ երկրորդ ծրագիրը: Մասնաւորապէս ծրագրին կաշկանդումներուն դէմ շատ զօրաւոր փաստերով կուռեցաւ բայց ի վերջոյ եզրակացուց թէ՛ այսու հանդերձ ըստ կարելոյն Համակերպելու է ծրագրին, ի գործ դնելով քանի մը մէթօսներէն մէկը որոնք բացատրեց: Ատոնք գլխաւորաբար նշատակ ունէին աշակերտը չվճարեցընել եւ դասարանէն գուրս ալ աշխատեցընել: Ի վերջոյ իր խօսքը վերջացուց ազդարանական գիտողութեանը մը ուր դարձեալ իր փորձառութիւնը կրճատեցաւ շայերք, ըսաւ, մասնաւորապէս արամաղութիւն ունին ուսողութեան, միայն թէ, ազդային վարժարաններու մէջ աւանդուելու եզրանակէն է որ կը վհատին շատ անգամ,

եւ անդամ մը որ վհատին, ալ անկարելի կ'ըլլայ բան սովորեցնել : «Ասոր համար շեշտեց դարձեալ զուարճալի եւ զբօսալի ընելու պէտքը բոլոր դասերու՝ մասնաւորապէս ուսողութեան :

Իր միակ թերութիւնն էր, ձայնին շատ կամաց ըլլալը, որով անոնք որ սրահին ետեւի կողմերը մնացած էին, շատ դժուարաւ կամ բնաւ չլսեցին : Այս գործնական եւ օգտակար ձեւով դասախօսութեան յաջորդեց ոչ նուազ գործնական միտք մը Սուրէնեան Աւետիս էֆէնտի որ դարձեալ իր 10 տարուան եւ կամ աւելի առաջուան ատենարանի հանգամանքներովը բեմ կ'ելլէր՝ ծայրայեղորէն բացայայտ լեզուով մը եւ զուարճալի ոճով մը՝ ուր սակայն երբէք իր նիւթին՝ էական թելը չկորսնցուց — ըսելու համար վարժապետներուն թէ հացի համար վարժապետութիւնը ոճիր մ'է եւ թէ աւելի լաւ է որ մարդ նարինջ ծախէ կամ ներկարար ըլլայ, քան թէ վարժապետ. զի դո՛նէ ատոնց մէջ ապագայի մը հեռապատկերը կայ մինչ վարժապետութեան մէջ ամէն բաղդի դուռ դոց է, եւ այն որ վարժապետ անունը կ'առնէ, այն օրուրնէ անձնուիրութիւնը կ'ընդգրկէ :

Կանոնաւոր դաս մը ըրաւ թէ եւ խոշոր շեղումներով ու զուարճալիքներով համեմուած :

Գիտութեանց երեք բաժանումներուն վրայ խօսեցաւ, Ա. անոնք որ յառաջագունէն են, այսինքն տղան ինքնիրեն կրնայ գիտնալ՝ պարզապէս մտածելով, ինչպէս թուաբանութիւնը, Բ. անոնք որ մակաձական, այսինքն ստացական են ինչպէս բարիին եւ չարին զողափարը որ պարզապէս ուսուցման արդիւնք է : Եւ Գ. բնագանցական գիտութիւնները որոնց վրայ խօսելէ զգուշացաւ՝ իր սահմաններէն դուրս նկատելով :

Մակաձական գիտութեանց ամէնէն զլխաւորը նկատեց պատմութիւնը եւ անոր յարակիցն եւ անբաժանելին համարեց Աշխարհագրութիւնը, Եւ շատ կծու կերպով յննադատեց տղոց հազա-

րաւոր տարիներով առաջ պատահած դէպքերը սորվեցնելու զրութիւնը եւ անհրաժեշտ համարեց տղուն սորվեցնել նախ ինքզինքը, ապա անոր ներշնչել մօր, հօր, եղբօր, ծանօթի, ազգի, կրօնի եւ կառավարութեան գաղափարը որոնք են նոյն իսկ տղուն պատմութիւնը : Նկարագիր կաղմկու գիտութիւնը համարեց պատմութիւնը եւ մանուկը աննկարագիր համարողները անիրաւ :

Իր խօսքերը որոնք ծիծաղով ու խնդումներեա ունկնդրուած էին, շատ աւելի ազդեցիկ եղան քան այն դասերը որոնք շատ լուրջ երեւոյթ մը ունէին, երկար յառաջաբան մը եւ վերացական ուղղութիւն մը : Ա .

ՏԻՐՈՒՆԻ

Մեր ընթերցողները մեծ վշտով մ'է որ պիտի իմանան Դ. էֆ. Սարգիսեանի մահը, իր մասին, իբրեւ արժանաւոր եւ արդիւնաւոր ուսուցչի, ասկէ առաջ գրած ենք ու թէ եւ բժշկական անողոք վճիռն ա'լ վերջին բառն ըսած էր, բայց դարձեալ անակնկալ մ'եղաւ իր մահուան գոյժը :

Կէտիկ վաշայի թաղական Խորհուրդը գովելի նախանձաւորութեամբ կարեւոր անօրէնութիւններն ըրած էր, եւ Կիրակի, 12 Մարտ, հանդիսաւոր կերպով կատարուեցաւ յուղարկաւորութեան կարգը. խուսն բազմութիւն կը մասնակցէր տխուր արարողութեանց եւ դամբանական խօսեցաւ Մեսրոպ Սպիսկոպոս :

Հանգուցեալը կը թողու այրի մը եւ երեք որբ :


ՆՈՒԱԳՍ. ՀԱՆԴԵՍ

Աղգ. Հիւանդանոցի ի նպաստ, ծանուցուած նուագահանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, Իւնիոն Ֆրանսէզի սրահին մէջ : Հոյ հայ-լայձը գրեթէ իր ամբողջութեամբ ներկայ էր հոն եւ բարեգործական նպատակի մը սատարած ըլլալու հաճոյքին հետ վայելեց երաժըշ-



տուժեան վարպետներու գեղեցիկ հատ-  
ւածները լսելու հոգեպարար զմայ-  
լանքը: Հասոյթ՝ իրր 5-600 ոսկի:

Կը ցաւինք որ, տեղի անձկու-  
թիւնը մեզ կը հարկադրէ, համառօտ գը-  
րել կիրակի օրուան նուագահանդէսին և  
ողբացեալ Դ. Սարգիսիանի յուզարկաւո-  
րութեան վրայ:



ՆԱՄՄԱԿՍՏՈՒՓ

Աստախան, Ղ. Բան. Այս. — Ղրկել  
հաճեցէք Ձեր 12 մարտ նամակով յիշած  
երկերը ամբողջովին: Պատրաստ ենք  
փոխարինելու:

Մարաշ, Թ. Շ. — Փակեցէք բաժա-  
նորդներու հաշիւները՝ 1898էն մինչեւ  
այսօր:

Դաւրէժ. Ս. Ա. — Թիւ 5ին մէջ է:  
Խաբբերդ, Ս. Շ. — Այո՛, զրկեցէք:  
Հիւսնի Մանուռ, Կ. Շ. — Ստացանք:  
Ամասիա. — Հ. Խ. — Ղրկեցէք:

Յ. Գ. — Ըստ կարի շուտ  
պիտի սկսինք հրատարակել:

Ուսքը, Տ. Ս. Բ. — Ղրկեցինք: Պա-  
կաս թիւերը պիտի ջանանք գտնել:

Կարին, Վ. Ա. — Ղրկեցէք բարոյալից  
կատակերգութիւնը:

Թիւրքիստան, Յ. Տ. Պ. — Ապառիկ  
գործ չենք կրնար ընել:

Այնթապ, Յ. Ե. Թ. — Նոյն:



ՎԱՐՉԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՊԱԾՄԱՆՆԵՐ

Ի զիւրութիւն անոնց որ մտադիր են  
որ և է գրքի հրատարակութիւնն ընել,  
ստորեւ ցոյց կուտանք ինչ ինչ միջոց-  
ներ ու պայմաններ որոնց դործադրու-  
թիւնն անհրաժեշտ է:

1. Տպուելիք գրքին ձեռագիրը երկու  
ՕՐԻՆԱԿ գրուելով մեզի զրկուելու է,  
(վաւերացման համար Մէտրիֆին ներ-

կայացուած ձեռագիրներն ըստ օրինի  
երկու օրինակ ըլլալու են):

2. Ձեռագիրը տեսնելէ վերջը միայն  
կրնանք որոշել՝

Թէ գիրքը ի՞նչ զիրքովու ծաւալով և  
քանի՞ ֆօռմա կրնայ ըլլալ,

Թէ ո՞րչափ գումարի կրնայ հասնիլ  
անոր տպագրութեան, թղթին, կաղմին,  
սրբագրութեան և յարակից աշխատու-  
թեանց ծախքը:

Թէ ո՞րքան օրինակ պէտք է և կրնայ  
տպուիլ:

Թէ Դաւթեան Գործակալութիւնը կը  
ստանձնէ՞ հոգալ գրքին ծախքը և իր  
հատուին կատարել տպագրութիւնը:

Թէ այս պարագային ի՞նչ իրաւունք  
կը վերապահէ գրքին տիրոջը կամ հե-  
ղինակին:

Այս ամէն կէտերը կարելի չէ որոշել  
մինչեւ որ աչքի առջև չունենանք  
տպուելիք գիրքը:

Ձեռագիրը չլրկած՝ այս պայմաններու  
մասին նամակով մեզի հարցումներ ուղ-  
ղել աւելորդ ժամալանառութիւն ու յոգ-  
նութիւն պիտի ըլլար, որոնց պէտք չլի-  
զելու համար է որ այս տեղեկութիւն-  
ները կը յանձնենք զաւառացի հեղինակ-  
ներուն ուշադրութեան, որպէս զի գի-  
տակցաբար համակերպին վերոյիշեալ ա-  
ռաջին պայմանին, եւ երկու օրինակ  
ձեռագիրները ապահովագրուած զրկեն  
մեր հասցէին:

در سعادت و بختی قوسنده قاضی مسکری خاننده

سایط داودیان

3. Իսկ, անոնք որ կ'ուզեն իրենց հաշ-  
ուին կատարել գրքին հրատարակութիւ-  
նը, պէտք է հոգան ծախքերը, ճշգին  
թէ ի՞նչ զիրքով, թղթով ու քանակու-  
թեամբ ու կաղմով կ'ուզեն հրատարա-  
կել իրենց գիրքը: Այս պարագային ալ,  
ծախքին քանակութիւնը որոշելու հա-  
մար, դարձեալ անհրաժեշտ է որ տես-  
նենք ձեռագիրը և ըստ այնմ ցոյց  
տանք մօտաւոր հաշիւը:

Հրատարակիչ  
Ս. ԴԱԻԹԵԱՆ

Բարիգէն Լուրեր

Ուրախութեամբ կը լսենք որ Բարիզի մեր սակաւաթիւ հայրենակից երիտասարդներէն, որոնք զեղարուեստի այլ եւ այլ ճիւղերուն կը հետեւին, Պր. Թէրլէմէզեան՝ աշակերտակարիչ Ակադէմիքիւիանի, համընթացութեան մէջ առաջին ելեր է բոլոր իւր Թրանսսցի ընկերներու մէջ: Թէրլէմէզեան Վանեցի երիտասարդ մ'է եւ շատ աշխատասէր, ճիշդ իր աշխատասիրութեան համար է որ այդ յաջողութիւնն ունեցած է եւ մինք յոյս ունինք որ նա իր Զանաթրութեամբ իրեն համար փայլուն աղաքայ մը կը պատրաստէ զեղարուեստի մէջ:

Վիճակագրութիւն

Իզմիտի գաւառին վրայ մեզի հազորուած վիճակագրութենէ մը կը տեղեկանանք թէ Նիկոմիդիոյ Առաջնորդութեան տակ կը գտնուին 35 հայ զեղեր եւ զիւղաքաղաքներ, որոնք կը պարունակեն 40 եկեղեցի, 80 քահանայ, 40 երկօտ վարժարան եւ 5 մանկապարտէզ:

ԳԵՂԵՅԻԿ ԵՒ ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Ա.

(Սեմաական փորձեր)

Անբաշղութիւն չկրած մարդէն, կ'ըսէ Երեմիա Տայօրը, — թշուաւ էակ անհնարին է երեւակայել:

— Երբեմն վիշաք բազդ կը բերէ: — Համբերատար ու խոհեմ մարդը ամենուրեւն վշտէն անգամ աւելի օգուտ կը ստանայ, քան աշխարհի վայելքները: — « Ի՞նչ զիտէ այն մարդը, որ վիշտ չէ կրած: — Ինչպէս որ կայծքարը կրակ չիտար, մինչեւ որ երկաթով չգարնես, այնպէս ալ հանճարը թշուատութեան անակնկալ հարուածի մը կարօտ է, որպէս զի սաստուածային կայծ թօթափէ: Կան ընտրութիւններ, որ միայն տառապանքներու մէջ կը ծաղկին ու պտուղ

կը բերեն, իսկ հանգստութեան ու լիութեան ժամանակ բոլորովին կը թօշնին: — Կոխը յաղթանակի պայմանն է:

Ս. Սմայլա

Վրիպակ. — Բիւրակն թիւ 9, էջ 137 ստանաւորին սկիզբը (եր չափազանց շատ սիրողը անարգողին) պիտի ըլլայ սիրածը:

Յաջորդ թուով պիտի հրատարակենք Ա. Մ. Գարագաշեանի կենսագրութեան վերջին եւ շահեկան մասը ուր նկարագրուած է իւր գրադէտ, իւր հեղինակ, իւր բանասէր եւ իրր բարոյական մարդ, եւ ներկայացուած է իր երկասիրութեանց երկարածիզ ցանկը:

Իզմիտի գաւառակին մէջ Ս. Դաւթեանի դասագրքերուն պէտք ունեցողները կրնան զիմը «Բիւրակն» գործակալ Տ. Արբահամ կոտաճեանին:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասկախաղ

« Զքոյօք ի բոյօց » — Հայրապետական տնօրէնութիւն, — Վարժուհիի վեհանձնութիւն:

Գրական

- Օսմանեան տաղաչափութիւն Թ. Կ.
- Կոյնի երգը [triolet] Ա. Շ.
- Յուշերգ Յ. Մ.
- Բարեգործ Ա. Ծ.

Ազգագրական

- Նախապաշարուններ Թալաթի Կ. Գ. Բ.
- Ժողովրդ. Բանահիւս. Հ. Հ.

Մանկավարժական

- Հոգեբանութիւն Բ. Յ. Պ.
- Գ. Նիսաջ Ա.

Վարչական

- Հրատարակչական պայմաններ Ա. Գ.
- Լուրեր, Նամակատուք, Ազդեր:

Արտօճատիք. — Հ. Ա. Խ. Ի. Թ. Ի. Զ. Ի. Զ.

ՏՅԱԿԻ. ՆԵՄԱՆ Կ. ՊԼՐՊԵՐԵԱՆ